Դշի (25 Փետր.). հիւանդացայ փոքր ինչ ցաւի։

Եշի (26 Փետր.). երեկոյիս զթուղթ Մինաս վարդապետին գրեցի հաստատագրութեամբ, զառաջի եղեալ զթեմսն կրկին նա տիրեսցէ։ Եւ առաւօտուս ել և գնաց աշակերտն իւր։ Եւ աւուրքս Իսրէլնու Ոհան եպիսկոպոսն եկ աստ վասն զթեմերն իւր հաստատելոյ։

Եւ օր Զշիս (27 Փետր.) Բ նաւ եկեալ ի Ճէզայիրու, և մտան առ թագաւորն թէ Ընդ ձեզ եմք մինչև ի մահ, զի ահա՛ բերաք վասն ձեր Կ նաւ, զՄ-ն առ Սախըզն պահելով և Ի-ն առ մեզ բերելով ի Պոզազն, որպէս հրամայես այնպէս առնիցուք՝ գալով ընդ ձեզ ի պատերազմ. թշնամի քո՝ է՛ մեզ թշնամի և բարեկամ[1]) քո՝ է՛ մեզ բարեկամ. և զոր հրամայեալ ես թէ Այսմ տարոյ Մսրայ խաղնան ձեզ լիցի ի պէտս խարճի՝ զայդ ոչ արասցուք և ոչ առնիցուք մի ըստակ, այլ զկեանք թագաւորին հայցեմք յԱստուծոյ, և զխաղնան Մսրայ դարձուցաք ընդ որ եկեալն էր. այլ զինչ հրամայես՝ պատրաստ եմք։ Եւ աւուրքս հացն կրկին սակաւանայր եւ հազիւ գտանէր զի ոչ գոյր նաւ ցորենոյ, զի ծանր ձմեռ արար սակաւ սակաւ, և որ ցորեան գտանէր՝ հացածախքն Հե ըստակ առնէին զքիլակն և ընդ նմին գարի խառնեալ ապա հաց առնէին։ Եւ աւուրքս պատրաստութիւն տեսանէին պատերազմի, վէզիրն յամենայն աւուր ի Թէրսխանան գնալով։ Եւ զիր եղև եէնկիչէրոցն զի երթիցեն ի պատերազմ. և սըրա զօլիքն թային արարեալ զի ի շուրջ եկեսցեն, որպէս զի ոք չարութիւն ոչ առնիցէ կամ հաշարութիւն։

Եւ օրս ի թագաւորէն կրկին եասախ եղև թուղթունն, զոր յանցս գնացիցց թագաւորին տեսեալ էր զոմն ի խմել։ Եւ ի վերայ բանիս վէզիրն ի սոյն յա-

1) բրկմբ.